ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝

ՏՆՕՐԵՆ՝ ՌԻԶԱ ԳՅԱՆՋՈՒՅԱՆ

ԱՄԻՍ՝ ԱՍՍԱԹԻՎ՝ 01.09.2023թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀՐԱԶԴԱՆԻ ՀԱՄԱՐ 7 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ ՊՈԱԿ

7- 8-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍՂԵԿ՝ ԷՄՄԱ ՎԱՐԴԱՆԻ ՄԱՆԱՍՅԱՆ

ԴԱՍՂԵԿԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ - ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

-դասարանում ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպում

• Աշակերտների հետ արտադասարանական դաստիարակչական աշխատանքի կազմակերպում

• սովորողների հանրօգուտ աշխատանքի կազմակերպում

• աշխատանք սովորողների ծնողների հետ

• դասարանի աշակերտների հանգստի և ժամանցի կազմակերպում

• համագործակցություն մանկավարժական աշխատողների հետ

• սովորողների առողջության,ֆիզիկական զարգացման ապահովում

• ծանոթացում սովորողների սոցիալական պայմաններին,ընտանեկան վիճակին

• սովորողների վարքի,հաճախումների վերահսկողություն

• աշխատանք մանկավարժահոգեբանական կարողությունների զարգացման ուղղությամբ

ԴԱՍՂԵԿԻ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դասարանի ղեկավարը (այսուհետ՝ դասղեկ), իսկ տարրական դպրոցում՝ դասվարը՝ դաստիարակչական աշխատանք է կատարում իր դասարանի սովորողների շրջանում, հայտնաբերում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված սովորողի (ընտանիքի) և դրա մասին մեկօրյա ժամկետում տեղեկացնում է դպրոցի տնօրենին՝ սերտորեն համագործակցելով մյուս մանկավարժական աշխատողների հետ.

• մասնակցում է իր ղեկավարած դասարանում սովորողների կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի դիտարկմանը, բացահայտմանը, գնահատմանը և մանկավարժահոգեբանական աջակցության համապատասխան ծառայությունների մշակմանը, դրանց ապահովմանը.

• նպաստում է սովորողների նկատմամբ դպրոցի և ընտանիքի միասնական մանկավարժական պահանջների կատարման ապահովմանը.

• անհրաժեշտության դեպքում սովորողների համար կազմակերպում է ուսումնական օգնություն.

• իրականացնում է դասարանի համար սահմանված գործավարությունը, էլեկտրոնային գրանցումները, դպրոցի տնօրինությանը ներկայացնում սովորողների

առաջադիմության, հաճախումների և վարքի մասին տեղեկատվություն.

• կազմակերպում է սովորողների առողջության ամրապնդմանն ու ֆիզիկական զարգացմանը նպաստող միջոցառումներ, մրցույթներ, նպատակային էքսկուրսիաներ, շրջագայություններ և այլ միջոցառումներ.

• դպրոցի մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացնում սովորողին խրախուսանքի կամ կարգապահական տույժի ներկայացնելու հարցը:

ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8-րդ դասարանը բաղկացած է 7 հոգուց: Ընդհանուր առմամբ աշակերտներն ունեն բավարար ընդունակություններ: Կան զերազանց սովորող աշակերտներ: Դասարանի կոլեկտիվը համախմբված է: Աշակերտներն ընկերասեր են, պատրաստակամորեն կատարում են դասղեկի հանձնարարությունները:

Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուստարվա ընթացքում: Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :

ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Հոգևոր դաստիարակություն: Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր կենտրոններ՝«Կեչառիսի վանական համալիր» և «Ջրառատի Սուրբ Կարապետ եկեղեցի»: Աշակերտների մոտ սերմանվել է սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:

2. Ռազմահայրենասիրական դաստիարակություն : Հայրենասիրության կրթության վերաբերյալ կազմակերպել քննարկումներ :

3. Ֆիզիկական դաստիարակություն: Դասապրոցեսին ցուցաբերել է ակտիվություն : Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինը ֆիզվարժությունների և հնարների միջոցով:

4. Աշխատանքային դաստիարակություն: Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը: Դպրոցում կազմակերպված շաբաթօրյակներին ակտիվ մասնակցություն ցուցաբերել:

6. Բնապահպանական դաստիարակություն: Պետք է կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը և այդ ընթացքում թվարկել բնապահպանական մի քանի խնդիրներ, որոնք առկա են իրենց շրջապատում և այդ խնդիրը գլոբալ է: Այդ նպատակով կազմակերպվել է էքսկուրսիա դեպի Ծաղկաձորի Կեչառիս վանական համալիր, ճոպանուղի: Դպրոց-ընտանիք կապը: Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Միևնույն ժամանակ գիտակցեն , որ պետք է

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Նախագահ՝ Գաբրիելյան Գայանե

Անդամներ՝ Հովսեփյան Լյուբա

Ալեքսանյան Աստղիկ

ԴԱՍԱՐԱՆԱԿԱՆ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

Նախագահ՝ Միքայելյան Ջանիկ

Անդամներ՝Հովհաննիսյան Հրաչիկ

Հովհաննիսյան Ծովինար

Ղարիբյան Մերի

Միքայելյան Էլեն

Մուրադյան Վահե

Սահակյան Լիանա

Ծնողական ժողովներ.

Անցկացման օրը	Քննարկվող հարցերը	Համառոտ բովանդակությունը
	1. 2023 -2024 ուստարվա ծնողական խորհրդի կազմի ընտրություն 2. Նոր ուսումնական տարվա հետ կապված կազմակերպչական հարցերի քննարկում 3. Դասագրքերի վարձավճարների հաստատում	Ծնողները իրենց հուզող հարցերը տվեցին դասղեկին և ստացան պատասխաններ: Որոշվեց, որ ծնողները կիրականացնեն ծնող-ուսուցիչ համակարգված հաղորդակցություն և աջակցում:

	4. Դասարանական խորհրդի անդամների ընտրություն 5. Հիմնական դպրոցի աշակերտին ներկայացվող պահանջների , ներքին կարգապահական կանոնների քննարկում: 6. Ծնողի իրավունքներն ու պարտականությունները թեմայով քննարկում	
	Ուսման առաջընթացի ապահովման պայմանների քննարկում: Կիսամյակային գնահատականների ներկայացում:	Ինչ միջոցներով բարձրացնել ուսման առաջադիմությունը:
	Ուսումնադաստիարակչան նպատակներով էքսկուրսիաների կազմակերպում: Աշակերտների վարքիցուցաբերած առաջադիմության քննարկում:	Կազմակերպել նպատակային էքսկուրսիա
	Երկրորդ կիսամյակի և տարեկան գնահատականների ամփոփում: Ամառային դասարանական էքսկուրսիա	2023-2024 ուս տարվա ընթացքում լինել ավելի հետևողական աշակերտների հաճախումների և ուսումնառության որակի բարձրացման նկատմամբ:

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարման ամսաթիվ	Կատարող
1	Ծանոթանալ աշակերտների նախասիրությունների հետ:	01 .09.2023	դասղեկ , աշակերտ
2	Սովորողների իրավունքներն ու պարտականությունները	08.09.2023	դասղեկ , աշակերտ
3	Զրույց Հայաստանի անկախության թեմայով:	15.09.2023	դասղեկ , աշակերտ
4	Դաստիրակությունը տանը և դպրոցում:	22.09.2023	դասղեկ , աշակերտ
5	Ընտանիք, հայ ավանդական ընտանիք	29.09.2023	դասղեկ , աշակերտ
6	Ուսուցիչներ,խոնարհվում ենք ձեր առաջ	06.10.2023	դասղեկ , աշակերտ
7	Խառնվածք և բնավորություն	13.10.2023	դասղեկ , աշակերտ
8	Կոնֆլիկտային իրավիճակներն ու դրանց լուծման ուղիները	20.10.2023	դասղեկ , աշակերտ
9	Ծխելը և առողջությունը	03.11.2023	դասղեկ , աշակերտ
10	Ես մարդ եմ	10.11.2023	դասղեկ , աշակերտ
11	Երեխայի առողջության պահպանման իրավունք	17.11.2023	դասղեկ , աշակերտ
12	Ընտանեկան ավանդույթներ	24.11.2023	դասղեկ , աշակերտ
13	Խոսք ես տվել, կատարի՛ր	01.12.2023	դասղեկ , աշակերտ
14	Բնական աղետներ, երկրաշարժ	08.12.2023	դասղեկ , աշակերտ
15	Գնահատիր ժամանակը	15.12.2023	դասղեկ , աշակերտ
16	Զրույց << Շուտով ամանոր է>> թեմայով	22.12.2023	դասղեկ , աշակերտ
17	Գիտելիքը ուժ է	12.01.2024	դասղեկ , աշակերտ
18	Ինչպես օգնել մարդկանց	19.01.2024	դասղեկ , աշակերտ
19	Հայոց հզոր բանակ	26.01.2024	դասղեկ , աշակերտ
20	Իսկական ընկերը	02.02.2024	դասղեկ , աշակերտ
21	Կարողանանք լսել միմյանց	09.02.2024	դասղեկ , աշակերտ
22	Փրկենք երկիր մոլորակը	16.02.2024	դասղեկ , աշակերտ
23	Լինենք բարեկիրթ	23.02.2024	դասղեկ , աշակերտ
24	Բարեկամությունն սկսվում է ժպիտից	01.03.2024	դասղեկ , աշակերտ
25	Ճանաչիր քո հայրենիքը	15.03.2024	դասղեկ , աշակերտ
26	Մեր հերոս նախնիները	22.03.2024	դասղեկ , աշակերտ

27	Գիրքն իմ բարեկամն է	05.04.2024	դասղեկ , աշակերտ
28	Լինենք հարգալից	12.04.2024	դասղեկ , աշակերտ
29	Օրը սկսենք «բարև»-ով	19.04.2024	դասղեկ , աշակերտ
30	Քառօրյա պատերազմի մեր քաջերը	26.04.2024	դասղեկ , աշակերտ
31	Պահպանենք բնությունը	03.05.2024	դասղեկ , աշակերտ
32	Իմ անձնական հիգիենան	10.05.2024	դասղեկ , աշակերտ
33	Պոլիէթիլենի տոպրակները և շրջակա միջավայրը	17.05.2024	դասղեկ , աշակերտ
34	Ինչպես անցկացնել ազատ ժամանակը	24.05.2024	դասղեկ , աշակերտ